

Էմիլյա ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

*ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական սպարադի նախագահի օգնական,
ՀՀ իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի և
քրեական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ*

ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՏԻԺԸ ՄԵՂՄԱՅՆՈՂ ՈՒ ԾԱՆՐԱՅՆՈՂ ՆԱՆՊԱՄԱՆՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՊԱՏԺ ԱՆՆԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՄԻՋՈՑ

Քրեական պատժի հիմնահարցը քրեական արդարադատության կարևորագույն հիմնախնդիրներից է: Այն, որպես քրեական պատասխանատվության իրականացման միջոց, կոչված է ապահովելու անձանց՝ օրենքին համապատասխանող վարքագիծը: Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի՝ 2009 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 12 և 4 կարծիքների համաձայն՝ կարևոր է հասարակության համար ապահովել անվտանգություն և արդարություն՝ հանցավոր վարքագիծը պատժելու արդյունավետ միջոցների ապահովմամբ¹:

Պատասխանատվության անհատականացման սկզբունքը պատժի տեսակն ու չափը որոշելու բազմաթիվ դրույթների և չափանիշների հետ մեկտեղ անխզելիորեն կապված է պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքների հետ, ինչն էլ պատժի արդարացիության ապահովման կարևորագույն միջոցներից մեկն է:

Այսպես՝ մեղմացնող և ծանրացնող հանգամանքներ ասելով՝ պետք է հասկանալ օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի այնպիսի գործոնների համակցությունը, որոնք վերաբերում են կատարված արարքին կամ հանցավորի անձին, և էականորեն ազդում են հանցագործության կամ հանցագործի՝ հանրության համար վտանգավորության աստիճանի վրա: ՀՀ քրեական օրենսգիրքը սահմանում է, որ պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության հա-

մար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով: Այս առումով պատժամիջոցն արդարացի կհամարվի, եթե այն համապատասխանի հողվածի դիսպոզիցիայում նշված արարքի էությանը, հանցավորի անձնավորությանը և այն մեղմացնող ու ծանրացնող հանգամանքների ամբողջությանը, որոնք «կրում է» մեղավոր անձը:

Մեղմացնող հանգամանքների առկայությունը դատարանին հնարավորություն է տալիս քրեական օրենքի սահմաններում նշանակելու մեղմ պատիժ՝ սանկցիայի ստորին սահմանին մոտ, ինչպես նաև թույլ են տալիս կիրառելու սահմանված պատիժներից ավելի մեղմը կամ պատիժը պայմանականորեն չկիրառել: Բացի դրանից՝ դատարանն իրավունք չունի հաշվի չառնել օրենքով նախատեսված մեղմացնող հանգամանքը: Մեղմացնող հանգամանքների ազդեցությունը պատժաչափի վրա կախված է կոնկրետ դեպքից, այդ հանգամանքների քանակից, հանցավորի անձից:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածը նախատեսում է պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների սպառիչ ցանկ. առաջին անգամ հանգամանքների պատահական գուգորդմամբ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարելը, հանցանք կատարելու պահին հանցավորի անչափահաս լինելը, հանցանք կատարելու

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2019 9 - 10 (243-244)

ԴԱՏԱԿԱՆ
Իշխանություն



կամ պատիժ նշանակելու պահին հանցավորի հղիությունը, պատիժ նշանակելու պահին հանցավորի խնամքի տակ մինչև տասնչորս տարեկան երեխայի առկայությունը, հանցանքը կյանքի ծանր հանգամանքների զուգորդման հետևանքով կամ կարեկցանքի շարժառիթով կատարելը, հանցանքն անհրաժեշտ պաշտպանության, հանցանք կատարած անձին բռնելու, ծայրահեղ անհրաժեշտության, հիմնավորված ռիսկի, հրամանը կամ կարգադրությունը կատարելու իրավաչափության պայմանները խախտելով կատարելը, տուժողի վարքագծի հակաօրինականությունը կամ հակաբարոյականությունը, որով պայմանավորվել է հանցագործությունը, հանցանքը սպառնալիքի կամ հարկադրանքի կամ նյութական, ծառայողական կամ այլ կախվածության ազդեցության տակ կատարելը, մեղայականով ներկայանալը, հանցագործությունը բացահայտելուն, հանցագործության մյուս մասնակիցներին մերկացնելուն, հանցագործությամբ ձեռք բերված գույքը որոնելուն աջակցելը, հանցագործությունից անմիջապես հետո տուժողին բժշկական կամ այլ օգնություն ցույց տալը, հանցագործությամբ պատճառված գույքային և բարոյական վնասը կամովին հատուցելը կամ վերացնելը, տուժողին պատճառված վնասը հարթելուն ուղղված այլ գործողությունները:

Միևնույն ժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածում նախատեսված պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներից մի քանիսը Հատուկ մասի առանձին հոդվածներում համարվում են հանցակազմի պարտադիր հատկանիշ, իսկ դրանց հիմնական մասը նշանակություն ունի պատժի նշանակման համար: Հետևաբար, եթե մեղմացնող հանգամանքը համարվում է հանցակազմի հատկանիշ, ապա համապատասխան հոդվածի սանկցիան արդեն իսկ մեղմացված է, և պատիժ նշանակելիս այդ հանգամանքը երկրորդ անգամ չի կարող գնահատվել (ՀՀ քրեական

օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ մաս):

Ինչպես արդեն իսկ նշվեց, որպես մեղմացնող հանգամանք օրենսգիրքը նշում է տուժողի վարքագծի հակաօրինականությունը կամ հակաբարոյականությունը, որով պայմանավորվել է հանցագործությունը: Տուժողի վարքագծի վերլուծությունը թույլ է տալիս բացահայտելու հանցագործության շարժառիթները, հանցավորի դիտավորության ուղղվածությունը և պատիժ նշանակելիս որոշել հանցավորի անձի և նրա արարքի հանրային վտանգավորության իրական աստիճանը: Տուժողի և նրա վարքագծի առանձնահատկություններն ուսումնասիրվում են առանձին գիտության՝ վիկտիմոլոգիայի շրջանակներում, որտեղ առանձնացվում են տուժողի վարքագծի տարբեր տիպեր: Մասնավորապես, առանձնացվում են տուժողի՝ պրովոկացիոն, թեթևամիտ և չեզոք վարքագծի տիպերը, որոնցից յուրաքանչյուրի դրսևորումը կարող է տարատեսակ ազդեցություն ունենալ հանցավոր վարքագծի մեխանիզմում²: Օրինակ՝ տուժողի պրովոկացիոն վարքագիծը, որը կրել է հակաիրավական կամ հակաբարոյական բնույթ, ունի երկակի քրեաիրավական նշանակություն. այն անձի մոտ կարող է առաջ բերել կամ հոգեկան խիստ հուզմունքի՝ աֆեկտի վիճակ, որի դեպքում կատարվածը որակվում է արտոնյալ հանցակազմով (ՀՀ քրեական օրենսգրքի 105-րդ և 114-րդ հոդվածներ), կամ դիտվել որպես հանցանք կատարած անձի պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք (ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ):

Վերլուծելով հանցավոր վարքագծի մեխանիզմում տուժողի պրովոկացիոն վարքագծի նշանակությունը, պետք է նշենք, որ շատ հաճախ հենց դա է «դրոյում» անձին հանցանքի կատարման և հանցագործության հիմնական «պատճառ» է հանդիսանում: Նման դեպքերում կարելի է ասել, որ տուժողը նույնքան կամ նույնիսկ ավելի «մեղավոր» է, քան հան-

ցավորը, ինչը պետք է քրեաիրավական գնահատականի արժանանա՝ թեթևացնելով հանցավորի մեղքը:

Այս հարցի կապակցությամբ բերենք մեկ օրինակ դատական պրակտիկայից.

Ժամկետային զինվորական ծառայություն անցնող զինծառայողներ Ն. Չ.-ն և Մ. Ա.-ն կատարել էին զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցանքներ: Այսպես՝ Ն. Չ.-ը կատարել էր ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 2-րդ մասով, իսկ Մ. Ա.-ն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցավոր արարքները («Պետի նկատմամբ բռնի գործողություններ կատարելը կամ դրանք կատարելու սպառնալիքը»): Երկու դեպքում էլ հանցագործությունները պայմանավորվել էին տուժողների՝ իրենց նկատմամբ պետ հանդիսացող անձանց դրսևորած հակաիրավական վարքագծով, ինչը, սակայն, դատարանների կողմից պատիժ նշանակելիս որևէ գնահատականի չէր արժանացել: Այս հարցի կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում՝ կարևորելով դատարանների կողմից անձի նկատմամբ պատիժ նշանակելիս և պատժի կրման նպատակահարմարության հարցը որոշելիս տուժողի վարքագիծը համակողմանի վերլուծության ենթարկելու անհրաժեշտությունը: Մասնավորապես նշելով, որ եթե այն կրել է հակաիրավական կամ հակաբարոյական բնույթ և միաժամանակ պայմանավորել հանցանքի կատարումը, սպա պետք է դիտվի որպես անձի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք: Վերը նշված գործով Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ. «(...) [Յ] անկացած հանցագործություն հանցավորի և որոշակի իրադրության փոխներգործության արդյունք է, հետևաբար հանցավոր վարքագծի մեխանիզմում վճռորոշ դերը պատկանում է ոչ միայն հանցավորին, այլև կոնկրետ իրադրությանը, որի բաղկացուցիչ մաս է կազմում նաև

տուժողի վարքագիծը: Այլ կերպ ասած՝ հանցավորի գործողությունները հաճախ պայմանավորված են լինում ոչ թե նրա անձնական առանձնահատկություններով, հակումներով կամ ձգտումներով, այլ տուժողի վարքագծով: Մասնավորապես, տուժողն իր սադրիչ՝ հակաօրինական կամ հակաբարոյական վարքագծով որոշ դեպքերում նպաստում է հանցավոր իրադրության ստեղծմանը՝ «դրդելով» այլ անձի կամ անձանց կողմից հանցագործություն կատարելուն: Նման դեպքերում վերջինս հանրորեն վտանգավոր արարքի և հետևանքների առաջացման հարցում բավականին ակտիվ դերակատարություն է ցուցաբերում և հանցավոր վարքագծի մեխանիզմում «մեղքի» համեմատաբար մեծ չափաբաժին ունի, ինչը պետք է համարժեք գնահատականի արժանանա դատարանի կողմից պատիժ նշանակելիս ևայն պայմանականորեն չլիքառելու հարցը լուծելիս (...)»³:

Այժմ անդրադառնանք ՀՀ քրեական օրենսգրքով որպես մեղմացնող հանգամանք նախատեսված մեղայականով ներկայանալուն: Բացահայտելով քննարկվող մեղմացնող հանգամանքի էությունը՝ նշենք, որ այն պետք է համապատասխանի որոշակի չափանիշների, մասնավորապես, պետք է լինի՝ 1) կամովին, այսինքն՝ անձի ազատ կամաարտահայտության, այլ ոչ թե նրա նկատմամբ ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի գործադրման արդյունք, և 2) պարունակի մեղայականով ներկայանալու հատկանիշները (համապատասխան անձն ընդունի իր մեղքը հանցագործության մեջ, անկեղծորեն զղջա և տա ճշմարտացի ցուցմունքներ): Միայն վերոնշյալ հատկանիշների միաժամանակյա առկայության դեպքում կարող է խոսք գնալ անձի նկատմամբ մեղայականով ներկայանալը որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք հաշվի առնելու հնարավորության մասին:

Հարկ է նկատել, որ ներկայանալու «կամովին» լինելու չափանիշը պրակտի-



կայում միատեսակ չի ընկալվում և տարակարծությունների տեղիք է տալիս: Վերոնշյալ հարցի վերաբերյալ տեսական գրականության մեջ նույնպես միասնական չափանիշը բացակայում է:

Վերոնշյալ հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել *Էդվարդ Ադամյանի* գործով 2014 թվականի դեկտեմբերի 16-ին կայացված որոշման շրջանակներում, մասնավորապես նշելով, որ «կամովին» ասելով պետք է հասկանալ ոչ միայն ֆիզիկական առումով ազատ գործելու հնարավորությունը, այսինքն՝ այն, որ անձը առանց ֆիզիկական հարկադրանքի, իր սեփական կամքով ներկայանում է վարույթն իրականացնող մարմին, այլև հոգեբանական առումով անձի կամքի վրա ազդող և այն ճնշող ցանկացած հարկադրանքի բացակայությունը: Այսպես՝ եթե հանցավորը գիտի, որ իր անձը հայտնի է իրավապահ մարմիններին և միաժամանակ գիտակցում է, որ չի կարող երկար թաքնված մնալ ու ներկայանում է, այն չի կարող դիտվել որպես մեղայականով կամովին ներկայանալ: Տվյալ դեպքում, իհարկե, ֆիզիկական առումով անձը գործել է իր կամքով, առանց որևէ արտաքին ազդեցության, սակայն հոգեբանական առումով ներկայացել է՝ երկար թաքնված մնալու հնարավորության բացակայությունը գիտակցելով: Հետևաբար, հանցավորի՝ վարույթն իրականացնող մարմին ներկայանալը կրում է ոչ թե կամովին, այլ հարկադրված բնույթ:

Նույն որոշմամբ Վճռաբեկ դատարանը որդեգրել է հետևյալ մոտեցումը. «(...) ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի իմաստով մեղայականով համապատասխան մարմիններ ներկայանալը դիտվում է որպես անձի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք, եթե՝ 1) հայտնի չէ հանցագործության դեպքը ու այն կատարած անձը, և նա կատարվածի վերաբերյալ կամովին հաղորդում է ներկայացնում իրավապահ մարմիններ (այս

դեպքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 177-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մեղայականով ներկայանալը հանդիսանում է քրեական գործ հարուցելու առիթ), 2) հայտնի է հանցագործության դեպքը, սակայն հայտնի չէ հանցավորի անձը, և վերջինս կամովին ներկայանում է համապատասխան մարմիններ, 3) հայտնի է ինչպես հանցագործության դեպքը, այնպես էլ այն կատարած անձը, և հանցավորը կամովին ներկայանում է՝ չգիտակցելով, որ ինքն արդեն իսկ մերկացված է հանցագործության կատարման մեջ (օրինակ՝ անձը գտնվում է հետախուզման մեջ, սակայն չգիտի այդ մասին և համոզված է, որ իրավապահ մարմիններին հայտնի չէ հանցագործության կամ այն իր կողմից կատարելու հանգամանքը կալյուր), 4) հանցանք կատարելու մեջ կասկածվող անձը ձերբակալվելուց հետո կամովին հայտնում է իր կողմից կատարված այլ հանցանքի մասին այն պարագայում, երբ մինչ այդ իրավապահ մարմինները չեն տիրապետել բավարար տվյալներ, որոնք կվկայեին նրա առնչությունն այդ դեպքին (...)»⁴:

Վերոգրյալից բխում է, որ բոլոր այն դեպքերում, երբ հանցավորը նախապես իմացել է իր «մերկացման» մասին, գիտակցել է քննությունից երկար թաքնվելու հնարավորության բացակայությունը և այդ հանգամանքով պայմանավորված՝ ներկայացել իրավապահ մարմիններ ու հայտնել իր կամ իր մասնակցությամբ կատարված հանցագործության հանգամանքները, չի կարող դիտվել որպես մեղայականով ներկայանալ և հանդիսանալ պատասխանատվության ու պատժի մեղմացման պարտադիր պայման, քանի որ մնան դեպքում խոսք չի կարող գնալ ներկայանալու կամովին բնույթի և կատարվածի համար անկեղծորեն զղջալու մասին:

Անհրաժեշտ է նկատել, որ գրականության մեջ արտահայտվել է նաև հակառակ կարծիքը: Մասնավորապես, որոշ հեղինակներ գտնում են, որ մեղայական

նով ներկայանալու համար որևէ նշանակություն չունի՝ համապատասխան մարմիններին մինչ այդ հայտնի է եղել հանցագործության մասին, թե ոչ կամ հանցավորը հետախուզվում է, թե ոչ⁵:

Մինևույն ժամանակ պետք նշել, որ որոշ դեպքերում հանցանք կատարած անձի գուտ ներկայանալու փաստը, որը չի ենթադրում մեղայականով ներկայանալ, դատարանը կարող է ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով գնահատել որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող այլ հանգամանք՝ հաշվի առնելով հանցավորի փաստացի ներկայանալու նշանակությունը հանցագործության արագ բացահայտման և գործի բնության համար:

Անդրադառնալով հաջորդ մեղմացնող հանգամանքին՝ հանցանքը սպառնալիքի կամ հարկադրանքի կամ նյութական, ծառայողական կամ այլ կախվածության ազդեցության տակ կատարելուն, պետք է նշենք, որ նշված մեղմացնող հանգամանքը կիրառելու համար անհրաժեշտ է հետևյալ երկու հանգամանքների միաժամանակյա առկայության հավաստում՝ 1) որևէ անձից իրական կախվածության հարաբերությունների (նյութական, ծառայողական կամ այլ) մեջ լինելու փաստի արձանագրում, 2) այդ կախվածությամբ պայմանավորված՝ հանցանքի կատարում:

Այս հարցի կապակցությամբ *Արամսյիս Նունուշյանի* գործով 2015 թվականի օգոստոսի 28-ին որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է՝ «(...) Վերոգրյալը [մեղմացնող հանգամանքը] վերաբերում է այնպիսի սպառնալիքին կամ հարկադրանքին, որն անձին չի գրկում իր կամքով գործելու հնարավորությունից և չի ստեղծում ծայրահեղ անհրաժեշտության վիճակ: Նյութական, ծառայողական կամ այլ կախվածության դեպքում անհրաժեշտ է փաստել, որ մնան կախվածությունն իրական է և պայմանավորել է հանցանքի կատարումը: Այսպես՝ նյու-

թական կախվածության դեպքում հանցավորը ֆինանսական կախվածության մեջ է գտնվում իրեն ազդեցության տակ գցողից (օրինակ՝ նրա խնամքի տակ է, բնակվում է նրա բնակարանում և այլն), ծառայողական կախվածության դեպքում գործում են դեկավար և ենթակա հարաբերությունները, իսկ այլ կախվածության տակ պետք է հասկանալ այնպիսի իրավիճակ, երբ ձևավորված հանգամանքների ուժով անձն իրեն պարտական է զգում մեկ այլ անձի նկատմամբ, իսկ վերջինս դա օգտագործելով՝ հակում է նրան հանցագործության: Այն կարող է առաջանալ ամուսնական, բարեկամական կամ այլ հարաբերությունների ուժով (կնոջ և ամուսնու, ծնողի և երեխայի, աշակերտի և ուսուցչի, ուսանողի ու դասախոսի միջև և այլն) (...)»⁶: Քննարկվող գործով ամբաստանյալ Ա. Նունուշյանն անչափահաս էր և հանցանքը կատարել էր քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող հոր՝ Արմեն Նունուշյանի դրդմամբ: Վճռաբեկ դատարանը, գնահատելով հոր և որդու միջև եղած հարաբերությունների բնույթը, հոր ունեցած բացասական ազդեցությունը Ա. Նունուշյանի վրա և դրա արդյունքում առաջացած հետևանքները, արձանագրեց, որ սույն գործով ամբաստանյալ Ա. Նունուշյանը գործել է իր հայր Արմեն Նունուշյանից կախվածության հարաբերություններից ելնելով, ինչն էլ պայմանավորել է հանցանքի կատարումը, հետևաբար նշված հանգամանքը անհրաժեշտ էր գնահատել որպես ամբաստանյալի պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 71-րդ հոդվածով նախատեսվել են պատիժը մեղմացնող մոր հանգամանքներ, որոնց թվում է հանցանքը կատարելու կամ պատիժ նշանակելու պահին հանցավորի վաթսուհինգ տարին լրացած լինելը⁷: Կարծում ենք, որ Նախագիծով առաջարկվող վերոնշյալ փոփոխությունը ընդունելի է, քանի որ



դատական պրակտիկայում առկա են բազմաթիվ դեպքեր երբ ամբաստանյալի մեծահասակ լինելու փաստը, անձը դրական բնութագրող այլ հանգամանքների հետ միասին էականորեն նվազեցնում է հանցավորի անձի և նրա կատարած արարքի հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը և հիմք հանդիսանում դատարանի կողմից մեղմ պատիժ նշանակելու համար:

Միևնույն ժամանակ Նախագծով առաջարկվել է պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների ցանկից հանել հանցանք կատարելու պահին հանցավորի անչափահաս լինելը: Կարծում ենք, որ նշվածի կապակցությամբ գործող օրենսգրքի դրույթն առավել ընդունելի է, քանի որ քրեական օրենսդրությունը հատուկ վերաբերմունք ունի անչափահասների նկատմամբ՝ օրենսգրքով նախատեսված են նորմեր, որոնք ստեղծում են բարենպաստ վիճակ անչափահասների համար (ՀՀ քրեական օրենսգրքի բաժին 5, գլուխ 14)՝ հաշվի առնելով, որ անչափահասը, ելնելով տարիքային առանձնահատկություններից, չի կարող լիովին պատկերացնել կատարված հանցանքի վտանգավորությունն ու ճիշտ կողմնորոշվել կոնկրետ իրադրությունում: Հաճախ մա լինում է կամ չափահաս հանցագործի ազդեցության տակ և չի կարողանում դրանից խուսափել, կամ նրա կողմից հանցանքի կատարմանը նպաստում են ծանր ընտանեկան պայմանները:

Անչափահասների նկատմամբ առանձնահատուկ սկզբունքներ և մոտեցումներ կիրառելու անհրաժեշտությունը սահմանված է նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի հանձնարարականում ևս: Մասնավորապես, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ CM/Rec (2008) 11 հանձնարարականի՝ «Պատիժների կամ այլ միջոցների ենթարկված անչափահաս իրավախախտների վերաբերյալ եվրոպական կանոնների» 2-րդ կետի վերլուծությունից հետ-

ևում է, որ անչափահասների նկատմամբ պատիժներ կամ նրանց հանցավոր վարքագծին արձագանքելու այլ եղանակներ նշանակելիս, առաջնահերթություն պետք է տրվի դաստիարակչական բնույթի, կանխարգելիչ և վերականգնողական միջոցների: Օրինակ, եթե հնարավոր է պատժի նպատակներին հասնել անչափահասի նկատմամբ ոչ թե պատիժ, այլ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելով, ապա պետք է ընտրվի այդ տարբերակը⁸: Նույն փաստաթղթում նշված են նաև «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայով սահմանված սկզբունքները՝ ազատությունից զրկելու հետ կապված ներգործության միջոցները որպես ծայրահեղ միջոց դիտարկելը և դրանց այլընտրանք հանդիսացող միջոցների լայն կիրառությունը⁹:

Ուստի անչափահասների վերաբերյալ գործեր բնեցիկ դատարանները պարտավոր են ի թիվս այլոց բննարկել նաև հանցավորի անձի, հանցագործություն ծնող պատճառների և նպաստող պայմանների վերաբերյալ տվյալները:

Մեղմացնող հանգամանքների խնդրի բննարկման շրջանակում հարկ է անդրադառնալ նաև Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի՝ 2010 թվականի նոյեմբերի 22-24-ի թիվ 6 կարծիքին (այսուհետ՝ Կարծիք), որի համաձայն՝ այն դեպքում երբ հանցանք կատարած անձն ընդունում է իր մեղքը, պետք է առավել մեղմ պատժի արժանանա, և որքան վաղ փուլում է ընդունում այն, այնքան ավելի մեղմ պատիժ է սահմանվում (սովորաբար պատժի տևողության մեկ երրորդը, որը կարող էր նշանակվել): Վերը հիշատակված կարծիքում մասնավորապես նշված է. «Այս գաղափարը որոշ մարդկանց համար կարող է վանող լինել: Նման մարդիկ կարող են պնդել, որ այն, ինչ մեղադրյալն արել է, մա է արել, և ցանկացած հանցագործություն պատժի է արժանի, երբ ապացուցվում է՝ անկախ այն բանից, մեղքն ընդունվել է, թե ոչ: Այն փաստարկը, որ մեղքի ընդու-

նումը նշանակում է զոջում, շատ դեպքերում իրականությանը չի համապատասխանում: Որոշ դեպքերում հնարավոր է սոցիալական պատասխան տալ նման դեպքերին այն համակարգերում, որտեղ դատաբնութայինը հիմնականում բանավոր է: Եթե հիմնական տուժողը խոցելի է (մասնավորապես՝ երեխաները և սեռական բնույթի բռնության զոհերը), ապա բանավոր լուծումները կարող են լրացուցիչ տրավմայի առիթ հանդիսանալ: Նման դեպքերում, ընդունելով մեղքը և վերացնելով դատական նիստի անհրաժեշտությունը, մեղադրյալը մեղմացնում կամ վերացնում է վնասը, որը կարող էր հասցվել իր գործողությունների հետևանքով:

(...) Մեղքի ընդունումը մեղմ պատժի արժանանալու նպատակով խրախուսելու պատճառն այն պրագմատիկ առավելություններն են, որոնք առկա են մեղքն ընդունելու դեպքում. (i) ապահովում է հանցանք կատարած անձի դատապարտումը, որը գիտի, որ մեղավոր է, բայց դրդապատճառ չունի պնդելու, որ դատաբնութային անցկացվի այն հույսով, թե իր դեմ ապացույցները կամ վկաները հակառակը կհանձնեն երդվյալ ատենակալներին կամ դատավորին, (ii) գործերը լուծվում են ավելի կարճ ժամանակում (այլ դատաբնութայիններ կարող են անցկացվել ժամանակին նույնիսկ այն դեպքում, երբ լիարժեք դատաբնութային դեպքում, միևնույնն է, մեղադրյալը դատապարտվելու էր): Ամբողջ հասարակության համար սա պրագմատիկ առավելություններ ունի:

Մակայն պարզ է, որ մեղմ պատիժը պետք է թույլատրվի, պետք է մաս գործեն որոշակի երաշխիքներ: Փաստաբանները և դատավորները պետք է զգուշավորություն դրսևորեն ապահովելու համար, որ մեղքի ընդունումը լինի կամավոր և մեղավորության իրական ընդունում: Դատավորները չպետք է մասնակցեն կամ ներքաշվեն փաստաբանների և հանցանք կատարած անձի միջև որևէ քննարկումներում, որոնք վերաբերում են պատժի

մեղմացմանը: (...) ԵԴԽԽ-ն վստահ չէ, թե արդյոք իրատեսակա՞ն է մեղքն ընդունելու դեպքում պատժի մեղմացման համակարգի անհապաղ ներմուծում առաջարկելը բոլոր անդամ պետություններում: Բայց ԵԴԽԽ-ն առաջարկում է, որ բոլոր երկրները դիտարկեն այն հարցը, թե արդյոք նման համակարգը կարո՞ղ է օգտակար լինել քրեական արդարադատության գործընթացի համար»¹⁰:

Լիովին համաձայնելով ԵԴԽԽ-ի վերոնյալ դիրքորոշման հետ՝ միևնույն ժամանակ պետք է նշենք, որ հանցանք կատարած անձի կողմից մեղքը չընդունելը, կատարված հանցանքի համար իրեն մեղավոր չճանաչելը չի կարող դիտվել որպես ծանրացնող հանգամանք, քանի որ տվյալ դեպքում կխախտվի անձի պաշտպանության իրավունքը:

Նշվածի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը 2017 թվականի օգոստոսի 30-ի որոշմամբ անդրադառնալով վերոնյալ խնդրին՝ արձանագրել է. «(...) [Մ] եղադրյալի կողմից իր մեղավորության կամ անմեղության մասին հայտարարելը վերջինիս օրենքով վերապահված իրավունքն է (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետ), իսկ իր իրավունքից օգտվելը կամ դրանցից օգտվելուց հրաժարվելը չի կարող մեկնաբանվել ի վնաս նրա և նրա համար առաջացնել որևէ անբարենպաստ հետևանք (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի 3-րդ մաս): Այդ համատեքստում Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ առաջադրված մեղադրանքը չընդունելով և իրեն մեղավոր չճանաչելով՝ մեղադրյալը չի խախտում այլոց իրավունքները, չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին, այլ օգտվում է օրենքով իրեն վերապահված իրավունքից, ուստի այդ իրավունքի իրացումն ի վնաս նրան մեկնաբանելը, այդ թվում՝ պատիժ նշանակելիս այն որպես անձը բացասականորեն բնութագրող հանգամանք դիտելն անթույլատրելի է և հանգեցնում



և ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ վավերացված միջազգային պայմանագրերով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով երաշխավորված մեղադրյալի պաշտպանության իրավունքի խախտմանը (...)»¹¹:

Բացի նախատեսված մեղմացնող հանգամանքներից՝ օրենքը դատարանին թույլ է տալիս հաշվի առնելու նաև այլ հանգամանքներ, որոնք նշված չեն օրենսգրքում (ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մաս): Դա բացատրվում է նրանով, որ այդպիսի մեղմացնող հանգամանքները բազմաթիվ են, և դրանցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները, իսկ այդ ամենը հնարավոր չէ նախատեսել օրենքով: Դրա հետ միասին դատարանն այս կամ այն հանգամանքը կարող է հաշվի առնել որպես մեղմացնող միայն այն դեպքում, երբ այն նվազեցնում է հանցագործության հասարակական վտանգավորության աստիճանը կամ բնույթը, ինչպես նաև, երբ վերաբերում է հանցավորին բնութագրող առանձնահատուկ հատկանիշներին (օրինակ՝ մասնակցությունն Արցախյան ազատամարտին, պետական պարզև ունենալը և այլն): Ինչպես օրենքում նախատեսվածների, այնպես էլ այլ մեղմացնող հանգամանքների կիրառման հիմք պետք է հանդիսանան համապատասխան ապացույցները: Դատարանը չի կարող մեղմացնող հանգամանք համարել այն հանգամանքները, որոնք ընդհանրապես բնութագրական են անձանց լայն շրջանակին (օրինակ՝ քրեական պատասխանատվության ենթարկված չլինելը, օրինապահ վարքագիծը և այլն):

Ինչ վերաբերում է պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներին, ապա ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածը սահմանում է ծանրացնող հանգամանքների սպառնիչ ցանկ, որը դատարանին հնարավորություն է տալիս նշանակելու հոդվածի սանկցիայի առավելագույն սահմանին մոտ պատիժ: Ինչպես և մեղմացնող հանգամանքների դեպքում, պատժի խստու-

քյան վրա ծանրացուցիչ հանգամանքների ազդեցությունը գնահատելիս դատարանը էլնում է նաև հանցավորի անձը բնութագրող առանձնահատկություններից:

Քննարկվող հարցի շրջանակում նշենք, որ Նախագծում պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքները ենթարկվել են քանակական և որակական փոփոխությունների, դրանց շրջանակը ընդլայնվել է և որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող նոր հանգամանքներ սահմանվել են.

- հանցանքը անչափահասի նկատմամբ, նրա հետ համատեղ կամ հանցավորի արարքի բնույթը գիտակցող անչափահասի ներկայությամբ կատարելը, եթե հանցավորը գիտակցում է, որ անձն անչափահաս է,

- հանցանքը իշխանական կամ ժառանգական լիազորություններով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կատարելը,

- հանցանքը գեների, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի կամ պայթուցիկ սարքերի կամ ռադիոակտիվ նյութերի գործադրմամբ կատարելը,

- հանցանքն ալկոհոլի, թմրամիջոցների, թունամիջոցների կամ հոգեմերկուրի ալկոհոլի ազդեցության հետևանքով կատարելը, եթե հանցավորն ինքն է իրեն դրել այդ վիճակի մեջ¹²:

Միևնույն ժամանակ Նախագծով պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների ցանկից հանվել է հանցանքն այնպիսի անձի կողմից կատարելը, ով դրանով իսկ խախտել է զինվորական կամ մասնագիտական երդումը: Կարծում ենք, որ այս ծանրացնող հանգամանքը չի կարող ազդել հանցագործության բնույթի և հանցավորի անձի վրա, քանի որ երդում տալն անձի համար չի ստեղծում նոր, լրացուցիչ իրավունքներ և պարտականություններ, քան օրենքով նախատեսվածները:

Ինչպես գործող օրենսգրքով, այնպես

ել Նախագծով որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք է նախատեսված հանցանքը հանրության համար վտանգավոր եղանակով կատարելը: Այս ծանրացնող հանգամանքի կարևորությունը դրսևորվում է այն դեպքում, երբ հանցագործությունը կատարելիս հանցավորն ընտրում է այնպիսի եղանակ, որով վտանգ է սպառնում շրջապատին՝ մարդկանց, բնությանը, գույքին և այլն: Այդպիսի եղանակների թվին են դասվում պայթյունը, հրդեհելը, փլուզումներ կամ թունավորումներ առաջացնելը, ամբոխի մեջ տուժողի վրա կրակահերթ արձակելը, առավել վտանգի աղբյուր օգտագործելը և այլն:

Ի տարբերություն մեղմացնող հանգամանքների՝ դատարանն իրավունք չունի օրենքով նախատեսվածներից բացի որևէ այլ հանգամանք դիտել որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող: Սակայն, եթե գործում կան հանցավորին բացասական բնութագրող փաստեր, որոնք 63-րդ հոդվածում թվարկված չեն որպես ծանրացնող հանգամանք՝ դատարանը կարող է դրանք արտացոլել դատավճռում և նշանակել խիստ պատիժ՝ ելնելով արդարացի պատիժ նշանակելու այն սկզբունքային պահանջից, որ պատժի տեսակը և չափը որոշվում է նաև հանցավորի անձը բնութագրող տվյալներով:

Բարձրագված հարցի վերաբերյալ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներով ձևավորված իրավական դիրքորոշումներին: Այսպես՝ *Գոռ Աբրահեկյանի* վերաբերյալ գործով 2015 թվականի հունիսի 5-ին կայացված որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հանցանքը որպես արհեստ կատարելը ծանրացնող հանգամանքին՝ արձանագրելով, որ «(...) [Հ]անցանքը որպես արհեստ կատարելը ենթադրում է նույն կամ նույնաբնույթ այնպիսի հանցանքների պարբերաբար կատարում, որոնց արդյունքում ստացվում է նյութական օգուտ, որն էլ ուղղված է հանցավոր

րի եկամտի հիմնական կամ լրացուցիչ աղբյուր ձևավորելուն: Այսպես, հանցավոր վարքագծի պարբերական բնույթն արտահայտվում է երեք կամ ավելի՝ նույն կամ նույնաբնույթ հանցանքների կատարմամբ, քանի որ այդ դեպքում կարելի է խոսել որոշակի հանցագործություններում անձի հմտացման, արհեստավարժության, նրա կայուն հակահասարակական կողմնորոշումների մասին: Ինչ վերաբերում է հանցավոր գործունեության արդյունքում եկամտի հիմնական կամ լրացուցիչ աղբյուր ձևավորելու հանգամանքին, ապա անհրաժեշտ է նշել, որ հանցագործության արդյունքում ստացվող նյութական օգուտը կհամարվի անձի եկամտի հիմնական աղբյուր այն դեպքում, երբ հանդիսանա հանցավորի եկամտի միակ աղբյուրը, ինչպես նաև գերազանցի նրա այլ եկամուտների չափը: Իսկ լրացուցիչ աղբյուր կհամարվի այն դեպքում, երբ հանցագործությունից ստացվող նյութական օգուտը կազմի անձի եկամտի ոչ ամբողջական, սակայն դրա զգալի մասը: Այս առումով անձի դիտավորությունը պետք է ուղղված լինի հանցավոր գործունեությանը եկամտի աղբյուր ձևավորելուն: (...) Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանցանքը որպես արհեստ կատարելը բնութագրվում է հետևյալ հատկանիշներով՝ ա) հանցավոր վարքագծի պարբերականություն (երեք կամ ավելի անգամ կատարելը), բ) նույն կամ նույնաբնույթ հանցանքների կատարում, գ) նյութական օգուտի ստացում, որը հանցավորի եկամտի հիմնական կամ լրացուցիչ աղբյուրն է, դ) հանցավոր գործունեությանը եկամտի հիմնական կամ լրացուցիչ աղբյուր ձևավորելուն ուղղված անձի դիտավորությունը (...)»¹³:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ անձի հանցավոր մասնագիտացման և վերջինիս արարքի՝ արհեստի հատկանիշներ ձեռք բերելու համար անհրաժեշտ է վարքագծի պարբերական բնույթ: Հինք ընդունելով տեսության մեջ

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2019 9 - 10 (243-244)

ԴԱՏԱԿԱՆ
Իշխանություն



առկա հիմնական մոտեցումները՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ հանցավոր վարքագծի պարբերականության մասին կարելի է խոսել միայն դրա՝ երեք կամ ավելի անգամ կրկնության դեպքում: Ընդ որում՝ հանցավոր գործունեությունն արհեստի հատկանիշներ է ձեռք բերում ոչ թե ցանկացած, այլ նույն կամ նույնաբնույթ հանցավոր արարքների պարբերաբար՝ երեք կամ ավելի անգամ, կատարելու դեպքում: Նույն կամ նույնաբնույթ հանցանքը պարբերաբար կատարելով՝ հանցավորը սկսում է տիրապետել տվյալ արարքի նրբություններին, մասնագիտացում է և ձեռք բերում հանցավոր պրոֆեսիոնալիզմի հատկանիշներ, ինչը բնականաբար բարձրացնում է վերջինիս հանրային վտանգավորության աստիճանը:

Վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ հանցավոր վարքագծի մասնագիտացումն ու հանցավոր պրոֆեսիոնալիզմի հատկանիշների ձեռք բերումն ինքնին բավարար չէ քննարկվող ծանրացնող հանգամանքի առկայությունը հավաստելու համար: Անհրաժեշտ է, որպեսզի անձը հանցավոր գործունեությամբ զբաղ-

վելով, որոշակի նպատակ հետապնդի, մասնավորապես՝ նրա դիտավորությունն ուղղված լինի նյութական օգուտ ձեռք բերելուն: Ընդ որում՝ հանցագործությունները պետք է լինեն հանցավորի եկամտի հիմնական կամ լրացուցիչ աղբյուրը, այսինքն՝ դրանցից ստացվող նյութական օգուտը պետք է կազմի անձի կամ նրա ընտանիքի միակ եկամտուր կամ դրա հիմնական մասը:

Ամփոփելով՝ նշենք, որ ՀՀ քրեական օրենսգրքում թվարկված պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները պատասխանատվության և պատժի անհատականացման կարևորագույն միջոցներից են: Վերը շարադրված վերլուծությունը հիմք է տալիս ենթադրելու, որ կատարված հանցագործությունը բնութագրելու և դրա էությունը բացահայտելու, ինչպես նաև արդարացի պատիժ նշանակելու համար անհրաժեշտ է ի թիվս այլոց բազմակողմանի վերլուծության ենթարկել պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները և ճիշտ գնահատական տալ դրանց:

¹ St'u Consultative Council of European Judges, "Relations between judges and prosecutors in a democratic society", Strasbourg, 8 December 2009, opinions No. 12 and No. 4:
² St'u Ա. Հ. Գաբուզյան, Կրիմինալոգիա (դասախոսություններ), Երևան, 2011, էջեր 43-44:
³ St'u ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Նիկոլայ Չաբնազյանի վերաբերյալ գործով 2014 թվականի մայիսի 31-ին կայացված թիվ ԵԱՆԳ/0060/01/13 և Մեեր Ալանոյանի վերաբերյալ գործով 2015 թվականի հունիսի 5-ին կայացված թիվ ՍԳ-3/0174/01/14 որոշումները:
⁴ St'u ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Էդվարդ Արամյանի վերաբերյալ գործով 2014 թվականի դեկտեմբերի 16-ին կայացված թիվ ԵԷԳ/0048/01/14 որոշումը:
⁵ St'u ՀՀ քրեական իրավունք, Ընդհանուր մաս, Երևան, 2012, էջ 428:

⁶ St'u ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Արամայիս Նունուշյանի վերաբերյալ գործով 2015 թվականի օգոստոսի 28-ին կայացված թիվ ԵԱՆԳ/0094/01/13 որոշումը:
⁷ St'u ՀՀ քրեական օրենսգրքի նախագիծ, էլեկտրոնային ռեսուրս՝ <https://www.e-draft.am/projects/496/about> (վերջին մուտք՝ 30.09.2019 թվական):
⁸ St'u Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ CM/Rec (2008) 11 հանձնարարականի «Պատիժների կամ այլ միջոցների ենթարկված անչափահաս իրավախախտների վերաբերյալ եվրոպական կանոնների» 2-րդ կետը:
⁹ St'u նույն տեղում:
¹⁰ St'u Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի՝ «Ողջամիտ ժամկետում արդար դատաքննության և դատաքննության ժամանակ դատավորի դերի մասին՝ հաշվի առնելով վեճերի կարգա-

վորման այլընտրանքային միջոցները», Ստրասբուրգ, 2010 թվականի նոյեմբերի 22-24, թիվ 6 կարծիք, կետ 85-89:

¹¹ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Հայկ Սիմոնյանի վերաբերյալ գործով 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԵԱԳԴ/0027/01/15 որոշումը:

¹² Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքի նախագծի 72-րդ հոդված, էլեկտրոնային ռեսուրս՝ <https://www.e-draft.am/projects/496/about> (վերջին մուտք՝ 30.09.2019 թվական):

¹³ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Գոռ Աթաբեկյանի վերաբերյալ գործով 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԵԿԴ/0149/01/14 որոշումը:



RESUME - ԱՄՓՈՓՈՒՄ

MITIGATING AND AGGRAVATING CIRCUMSTANCES OF THE LIABILITY AND THE PUNISHMENT AS AN IMPORTANT CRITERION FOR INDIVIDUALIZATION OF PUNISHMENT

E. Abrahamyan

Assistant to the Chairman of the Criminal chamber of the RA Cassation court, PhD student of the Chair of Criminal Law and Criminal Procedure Law of RAU Institute of Law and Politics

When sentencing, the nature and the degree of public danger of the crime and the personality of the perpetrator, including circumstances mitigating and aggravating the punishment, shall be taken into account. Circumstances mitigating and aggravating the punishment occupy a rather significant place in the system of general principles of sentencing and play a significant role in the process of individualization of punishment of a person convicted for a crime. Without reference to mitigating and aggravating circumstances, the court's verdict is deprived of the necessary specificity.

The legislator, opening the list of mitigating and aggravating circumstances, provided an opportunity for the court to evaluate certain circumstances independently when determining them as mitigating or aggravating circumstances.

In the article, the author represents definitions made by scientists on this topic, as well as legal positions and approaches of the Court of Cassation of RA.

Keywords: *punishment, mitigating circumstances, aggravating circumstances, criteria of individualization of punishment.*

СМЯГЧАЮЩИЕ И ОТЯГЧАЮЩИЕ ОБСТОЯТЕЛЬСТВА ОТВЕТСТВЕННОСТИ И НАКАЗАНИЯ КАК ВАЖНЫЙ КРИТЕРИЙ ИНДИВИДУАЛИЗАЦИИ НАКАЗАНИЯ

Э. Абрамян

Помощник председателя уголовной палаты кассационного суда РА, соискатель кафедры уголовного права и уголовно-процессуального права института права и политики РАУ

При назначении наказания учитываются характер и степень общественной опасности преступления и личность виновного, в том числе обстоятельства, смягчающие и отягчающие наказание. Обстоятельства, смягчающие и отягчающие наказание, занимают достаточно значимое место в системе общих начал назначения наказания и выполняют существенную роль в процессе индивидуализации наказания лицу, признанному виновным в совершении преступления. Без ссылки на смягчающие и отягчающие обстоятельства приговор суда лишается необходимой конкретности.

Законодатель, открыв перечень смягчающих и отягчающих обстоятельств, предоставил суду возможность самостоятельно оценивать те или иные обстоятельства в качестве признания их смягчающими или отягчающими обстоятельствами.

В статье автор приводит определения высказанные учеными по данной теме, а также правовые позиции и подходы Кассационного суда РА.

Ключевые слова: *наказание, смягчающие обстоятельства, отягчающие обстоятельства, критерии индивидуализации наказания.*

***Բանալի բառեր** - պարիժ, մեղմացնող հանգամանքներ, ծանրացնող հանգամանքներ, պարժի անհատականացման չափանիշներ:*

Է. Աբրահամյան - ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի օգնական, ՀՌ-Հ իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ, էլ. փոստ՝ emilyaahrahamyan@gmail.com

Ներկայացվել է խմբագրություն՝ 30.09.2019, տրվել է գրախոսության՝ 30.09.2019, երաշխավորվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Լ. Թադևոսյանի կողմից, ընդունվել է տպագրության՝ 24.10.2019

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2019 9 - 10 (243-244)